

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ

ԵՎ

ՔԵՄՈՆԻՔՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2002

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

SPONSORED BY  
THE COUNCIL OF EUROPE  
AND  
CHEMONICS INTERNATIONAL INC.

COLLECTION OF JUDGMENTS  
OF EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Մասնագիտական խմբագիր

YEREVAN 2002

Ալվինա Գյուլումյան  
ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,  
ՀՀ դատավորների միության նախագահ

Պատասխանատու խմբագիր

Լիանա Հակոբյան  
ՀՀ սահմանադրական դատարանի  
աշխատակազմի գլխավոր մասնագետ

Լեզվական խմբագիր

Աիդա Կարապետյան

Ժողովածուի մեջ ընդգրկված վճիռները անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը  
Մարինա Մխիթարյանը  
Սուսաննա Բաղդասարյանը  
Կարինե Բալայանը

ԲՈՒՐԴՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ

CASE OF BURDOV v. RUSSIA

Դատարանի 2002թ. մայիսի 7-ի

Վճիռը

Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), նիստ գումարելով որպես Պալատ՝ դատավորների հետևյալ կազմով. պրն Բ. Լ. Ռոզակիս, տկն Ֆ. Տուկենս, պրն Պ. Լորենզեն, տկն Ն. Վաշիկ, պրն Ի. Լևից, պրն Ա. Կովլեր, պրն Վ. Ջագրեբելսկի, նաև պրն Է. Ֆրիբերգ, Բաժանմունքի քարտուղար, 2002թ. ապրիլի 18-ին, դռնփակ խորհրդակցությունից հետո, վերոնշյալ օրը կայացրեց հետևյալ վճիռը.

Վարույթը

1. Գործի համար առիթ է հանդիսացել 2000թ. մարտի 20-ին Ռուսաստանի քաղաքացի Անատոլի Տիխոնի Բուրդովի («դիմող») կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի հիման վրա ընդդեմ Ռուսաստանի Դաշնության՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանին ուղղված գանգատը (թիվ 59498/00):

2. Դիմողին, որին տրամադրվել է իրավաբանական օգնություն, Դատարանում ներկայացնում էր Դոնի Ռոստովում պրակտիկ գործունեությամբ զբաղվող փաստաբան պրն Ն. Ա. Կրավցովը: Ռուսաստանի կառավարությունը «Կառավարություն» ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչ, Կառավարության գործակալ պրն Պ. Ա. Լապտևը:

3. Դիմողը մասնավորապես պնդել է, որ իր օգտին կայացված վճիռը չկատարելն անհամատեղելի է Կոնվենցիայի հետ:

4. Գանգատը հանձնվել է Դատարանի առաջին բաժանմունք (Դատարանի կանոնակարգի 52-րդ կանոնի 1-ին կետ): Այդ Բաժանմունքի շրջանակներում գործը քննության առնելու նպատակով (Կոնվենցիայի 1-ին բաժնի 27-րդ հոդված) Դատարանի կանոնակարգի 26-րդ կանոնի 1-ին կետով նախատեսված կարգով կազմավորվել է Պալատ:

5. Դատարանը 2001թ. հունիսի 21-ի որոշմամբ գանգատը ճանաչել է մասամբ ընդունելի:

6. Գործի հանգամանքների վերաբերյալ լրացուցիչ ապացույցներ են ներկայացրել և՛ դիմողը, և՛ Կառավարությունը (59-րդ կանոնի 1-ին կետ): Խորհրդակցելով կողմերի հետ՝ Դատարանը որոշել է, որ ըստ էության գործը քննելու համար լսումներ անցկացնելու անհրաժեշտություն չկա (59-րդ կանոնի 2-րդ կետ in fine):

Փաստեր

Գործի հանգամանքները

7. 1986թ. հոկտեմբերի 1-ին դիմողը զինվորական իշխանությունների կողմից կանչվել է Չերնոբիլի ատոմակայանի աղետի գոտում կատարվող արտակարգ

միջոցառումներին մասնակցելու: Դիմողը ներգրավված է եղել աշխատանքներին մինչև 1987թ. հունվարի 11-ը, և արդյունքում ստացել է ռադիոակտիվ ճառագայթում:

8. 1991թ., փորձագիտական եզրակացության հիման վրա, որը հաստատում էր կապը դիմողի վատառողջության և նրա՝ Չերնոբիլի դեպքերին ներգրավված լինելու միջև, վերջինիս հատկացվել է փոխհատուցում:

9. 1997թ. դիմողը հայց է հարուցել ընդդեմ Շախտի քաղաքի սոցիալական ապահովության ծառայության, քանի որ փոխհատուցումը չէր վճարվել: 1997թ. մարտի 3-ին Շախտիի քաղաքային դատարանը հայցը բավարարել է՝ դիմողին հատկացնելով 23,786,567 ռուսական ռուբլի՝ չվճարված փոխհատուցումը, և համարժեք գումար՝ տուգանքի ձևով:

10. 1999թ. ապրիլի 9-ին Շախտի քաղաքի հարկադիր կատարման ծառայությունը հարուցել է կատարողական վարույթ՝ 1997թ. մարտի 3-ին նշանակված տուգանքը բռնագանձելու համար:

11. 1999թ. դիմողը հայց է հարուցել ընդդեմ Սոցիալական ապահովության ծառայության՝ ստանալու համար չվճարված փոխհատուցումը, և վիճարկելով ամսական վճարումների գումարների չափի կրճատումը: 1999թ. մայիսի 21-ին Շախտիի քաղաքային դատարանը վերականգնել է փոխհատուցման սկզբնական գումարը և կարգադրել Սոցիալական ապահովության ծառայությանը՝ կատարել փոխհատուցման ամսական վճարումներ՝ 3,011.36 ռուսական ռուբլու չափով՝ հետագա ինդեքսավորմամբ: Դատարանը նաև կարգադրել է չվճարված գումարների վճարումը՝ ընդհանուր առմամբ 8,752.65 ռուսական ռուբլու չափով:

12. 1999թ. օգոստոսի 30-ին Շախտի քաղաքի հարկադիր կատարման ծառայությունը վարույթ է հարուցել 1999թ. մայիսի 21-ի վճիռն ի կատար ածելու համար:

13. 1999թ. սեպտեմբերի 16-ին Շախտի քաղաքի հարկադիր կատարման ծառայությունը դիմողին տեղեկացրել է, որ թեև 1997թ. մարտի 3-ի վճռի կատարմանն ուղղված վարույթն ընթացքի մեջ է, այնուամենայնիվ, վճարումներ դիմողին չեն կարող կատարվել, քանի որ Սոցիալական ապահովության ծառայությունը միջոցներ չունի:

14. 1999թ. հոկտեմբերի 7-ին Ռոստովի մարզի արդարադատության գլխավոր վարչությունը դիմողին տեղեկացրել է, որ երկու վճիռներից և ոչ մեկը չի կարող ի կատար ածվել, քանի որ պատասխանող կողմը չունի բավարար միջոցներ:

15. Պատասխանելով դիմողի՝ վճիռները չկատարելու մասին գանգատին, 1999թ. նոյեմբերի 12-ին Շախտիի դատախազը վերջինիս տեղեկացրել է, որ հարկադիր կատարման ծառայությունը հետևողական է եղել կատարողական վարույթ հարուցելիս, որի համար, սակայն, խոչընդոտ է հանդիսացել պատասխանողի միջոցների բացակայությունը:

16. 1999թ. դեկտեմբերի 22-ին Ռոստովի մարզի արդարադատության գլխավոր վարչությունը դիմողին տեղեկացրել է, որ Չերնոբիլի փոխհատուցումը վճարելու համար միջոցներ են հատկացվել դաշնային բյուջեից, և որ վճարումը կկատարվի ֆինանսների նախարարությունից համապատասխան փոխանցում ստանալուն պես:

17. 2000թ. հունվարի 26-ին Ռոստովի մարզի դատախազությունը դիմողին տեղեկացրել է, որ վճիռը չկատարելը ոչ մի կերպ չի կարող վերագրվել հարկադիր կատարման ծառայությանը, և որ պարտքը կմարվի՝ հենց որ դաշնային բյուջեից կատարվեն համապատասխան հատկացումները:

18. 2000թ. մարտի 22-ին Ռոստովի մարզի արդարադատության գլխավոր վարչությունը դիմողին տեղեկացրել է, որ Չերնոբիլի աղետյալների փոխհատուցումը կֆինանսավորվի դաշնային բյուջեից:

19. 2000թ. ապրիլի 11-ին Շախտի քաղաքի հարկադիր կատարման ծառայությունը դիմողին տեղեկացրել է, որ անհնարին է եղել ի կատար ածել վերջինիս օգտին

կայացված վճիռը, քանի որ Ռոստովի մարզի աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարությունը միջոցներ չունի:

20. 2000թ. մայիսի 16-ին Շախտիի դատախազը դիմողին տեղեկացրել է, որ նույնիսկ չնայած նրան, որ Շախտիի սոցիալական ապահովության ծառայությունը 1999թ. մայիսի 21-ի վճռի համաձայն վերահաշվարկել է դիմողին հասանելիք փոխհատուցման գումարը, այնուամենայնիվ, վճարումները չեն կարող կատարվել միջոցների բացակայության պատճառով:

21. 2000թ. մարտի 9-ին Շախտիի քաղաքային դատարանը կարգադրել է կատարել 1997թ. մարտի 3-ին հատկացված այն գումարի ինդեքսավորումը, որը դեռ չէր վճարվել դիմողին: Տրվել է լրացուցիչ կատարողական թերթ՝ 44,095.37 ռուսական ռուբլու չափով գումարի համար:

22. Հետևելով Ֆինանսների նախարարության ընդունած որոշմանը՝ 2001թ. մարտի 5-ին Սոցիալական ապահովության ծառայությունը դիմողին վճարել է չվճարված պարտքը՝ 113,040.38 ռուսական ռուբլու չափով:

23. Համաձայն Սոցիալական ապահովության ծառայության 2002թ. փետրվարի 11-ին տրամադրած տեղեկատվության, փոխհատուցումը, որը պետք է վճարվի դիմողին, 2001թ. ապրիլի և 2002թ. հունիսի միջև ընկած ժամանակահատվածի համար, սահմանվել է ամսական 2500 ռուսական ռուբլու չափով:

#### ԳՐԹԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

24. Ըստ Կատարողական վարույթի մասին 1997թ. հուլիսի 21-ի դաշնային օրենքի 9-րդ հոդվածի՝ կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի կարգադրության մեջ պետք է սահմանվի ժամկետ՝ պատասխանողի կողմից կատարողական թերթում շարադրված պահանջները կամավոր կատարելու համար: Ժամկետը չի կարող գերազանցել 5 օրը: Հարկադիր կատարողը նախազգուշացնում է պարտապանին՝ վերջինիս կողմից պարտավորությունները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում նշված պահանջների հարկադիր կատարման մասին:

25. Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ կատարողական գործողությունները հարկադիր կատարողի կողմից պետք է կատարվեն կատարողական թերթն ստանալու օրվանից՝ երկամսյա ժամկետում:

#### Իրավունքի հարցերը

26. Դիմողը պնդել է, որ վերջնական վճիռների կատարման զգալի և չարդարացված ձգձգումը ոտնահարում է Կոնվենցիայով ճանաչված իր իրավունքները: Դատարանը գանգատը քննության է առել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա:

#### I. Դիմողի՝ զոհի կարգավիճակը

27. Ըստ Կառավարության՝ դիմողը դադարել է Կոնվենցիայի վիճարկվող խախտման զոհ լինելուց 2001թ. մարտի 5-ին՝ պարտքի վճարման արդյունքում: Կառավարությունը պնդել է, որ դիմողի պահանջները լիովին բավարարված են եղել այն ժամանակվանից, երբ նրա կրած նյութական վնասը՝ ենթադրաբար պատճառված վճռի չկատարմամբ, ամբողջովին հատուցվել է:

Կառավարությունը նաև պնդել է, որ 2001թ. մարտի 5-ին վճարված 113.040,38 ռուսական ռուբլին պետք է դիտվի որպես գումար, որը ներառում է փոխհատուցումը՝ վճռի կատարման ձգձգման համար, քանի որ հիմնական պարտքը հավասար է եղել ընդամենը 45,158.44 ռուսական ռուբլու, մինչդեռ մնացած գումարն առաջացել է ուշ

վճարելու համար տուգանքից՝ հօգուտ դիմողի, և վերը նշված գումարի ռեալվացիայից:

Կառավարությունը վերջում նկատել է, որ դիմողը, եթե ցանկանար, ազատ էր դատական հայց ներկայացնելու վճռի չկատարումից բխող ոչ նյութական վնասի համար:

28. Դիմողը չի համաձայնել այս պատճառաբանություններին: Նրա պնդմամբ՝ իր ամսական նպաստն ուշ վճարելու համար ներպետական դատարանի կողմից նշանակված տուգանքի չափը էականորեն ավելի ցածր էր, քան այն պետք է լիներ, և քանի որ 2001թ. մարտի 5-ին ստացված գումարը՝ 113,040.38 ռուսական ռուբլու չափով, կազմված էր 1997, 1999 և 2000թթ. կատարված դատական հատկացումներից, այն ակնհայտորեն չէր կարող ներառել որևէ փոխհատուցում՝ 2000թ. մարտի 9-ի (վերջին դատական որոշման ամսաթիվը) և 2001թ. մարտի 5-ի միջև ընկած ժամանակահատվածում վճիռը չկատարելու համար: Բացի դրանից, 1999թ. մայիսի 21-ի վճիռը դեռևս անտեսված էր, քանի որ դիմողին տրվող ընթացիկ ամսական վճարումները, այնուամենայնիվ, ավելի ցածր էին, քան պետք է լինեին:

29. Համաձայն Կոնվենցիայի 34 հոդվածի՝ «Դատարանը կարող է զանգատներ ընդունել ցանկացած անձից... որը պնդում է, թե դարձել է սույն Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով ճանաչված իր իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ»:

30. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի խախտումը վերացնելն առաջին հերթին ներպետական իշխանությունների խնդիրն է: Հարցն այս առումով այն է, թե կարո՞ղ է, արդյոք, դիմողը հավակնել լինելու Կոնվենցիայի խախտման զոհ գործին առնչվող դատավարության բոլոր փուլերում (տես՝ Ե-ն ընդդեմ Ավստրիայի, դիմում թիվ 10668/83, Հանձնաժողովի՝ 1987թ. մայիսի 13-ի որոշումը, Որոշումներ և Հաղորդումներ 52, էջ 177):

31. Այնուհետև Դատարանը կրկնում է, որ դիմողի օգտին կայացված որոշումը կամ կիրառված միջոցառումը, ըստ էության, բավարար չէ նրան զոհի կարգավիճակից զրկելու համար, եթե պետական իշխանությունները չեն ճանաչել Կոնվենցիայի խախտումը, և այնուհետև վերացրել այդ խախտումը (տես՝ Ամուրն ընդդեմ Ֆրանսիայի 1996թ. հունիսի 25-ի վճիռը, Որոշումների և վճիռների ժողովածու 1996-III, էջ 846, կետ 36, և *Դալբան ընդդեմ Ռումինիայի* [GC], ք. 28114/95, կետ 44, ECHR 1999-VI):

Ինչ վերաբերում է սույն գործի փաստացի հանգամանքներին, հնարավոր է, որ այժմ դիմողին վճարվել է չվճարված պարտքը՝ ներպետական դատարանի վճռի համաձայն: Այնուամենայնիվ, վճարումը, որը կատարվել է այն բանից հետո միայն, երբ տվյալ զանգատը փոխանցվել է Կառավարությանը, չի հանդիսանում խախտման փաստի ճանաչում: Եվ ոչ էլ Կառավարությունը տրամադրել է դիմողին համարժեք փոխհատուցում:

32. Այս պարագայում Դատարանը գտնում է, որ դիմողը, այնուամենայնիվ, կարող է հավակնել հանդիսանալու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման զոհ:

## II. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը

33. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը գործի առնչությամբ սահմանում է. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, .... ունի ...դատարանի կողմից ...արդարացի ...դատաքննության իրավունք»:

34. Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը յուրաքանչյուրի համար երաշխավորում է իր քաղաքացիական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատարան կամ տրիբունալ հայց ներկայացնելու իրավունք. այս ձևով է

մարմնավորվում «դատարանի իրավունքը», որի ասպեկտներից մեկը դատարան դիմելու իրավունքն է, այն է՝ քաղաքացիական գործերով դատարան հայց ներկայացնելու իրավունքը: Այնուամենայնիվ, այս իրավունքը կլինի անհրաժեշտ, եթե Պայմանավորվող պետության ներպետական իրավական համակարգը թույլ տա, որ դատարանի վերջնական, պարտադիր որոշումը մնա չգործող՝ ի վնաս կողմերից մեկի: Աներևակայելի բան կստացվի, եթե 6-րդ հոդվածի 1-ին կետը մանրամասնորեն նկարագրի կողմերին տրամադրվող դատավարական երաշխիքները՝ դատավարություններ, որոնք արդար են, դժբաղ և արագ՝ առանց պաշտպանելու դատական ակտերի կատարումը: 6-րդ հոդվածի մեկնաբանությունը որպես հոդվածի, որը կապված է բացառապես դատարան դիմելու և դատավարություն իրականացնելու հետ, հավանաբար, կհանգեցնի իրավական պետության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների, որը Պայմանավորվող պետությունները պարտավորվել են հարգել Կոնվենցիան վավերացնելիս: Հետևաբար, 6-րդ հոդվածի նպատակն է, որպեսզի ցանկացած դատարանի կայացրած վճռի կատարումը դիտվի որպես «դատաքննության» անբաժանելի մաս (տես՝ Հորնսբին ընդդեմ Հունաստանի 1997թ. մարտի 19-ի վճիռը, Որոշումների և վճիռների ժողովածու, էջ 510, կետ 40):

35. Պետական իշխանությունները չեն կարող պատճառ բերել միջոցների բացակայությունը՝ դատարանի կողմից վճռված պարտքի չվճարումն արդարացնելու համար: Ընդունելի է, որ վճռի կատարման ձգձգումը կարող է արդարացվել որոշակի հանգամանքներում: Բայց ձգձգումը չի կարող լինել այնպիսին, որ նվազեցնի 6-րդ հոդվածի 1-ին կետով պաշտպանվող իրավունքի էությունը (տես՝ Իմնոբիլիարե Սոֆին ընդդեմ Իտալիայի [GC], թ. 22774/93, կետ 74, ECHR 1999-V):

Սույն գործում անընդունելի է պետության ունեցած ենթադրյալ ֆինանսական դժվարությունների պատճառաբանությամբ դիմողին զրկել իր օգտին լուծված այն վեճից շահ ստանալու հնարավորությունից, որը վերաբերել է արտակարգ միջոցառումներին հարկադրված մասնակցության արդյունքում առողջությանը պատճառված վնասի դիմաց փոխհատուցմանը:

36. Դատարանը նշում է, որ Շախտիի քաղաքային դատարանի 1997թ. մարտի 3-ի, 1999թ. մայիսի 21-ի և 2000թ. մարտի 9-ի վճիռները՝ ամբողջությամբ կամ մասամբ, մնացել են անկատար առնվազն մինչև 2001թ. մարտի 5-ը, երբ Ֆինանսների նախարարությունը կայացրել է որոշում՝ դիմողին հասանելիք պարտքն ամբողջությամբ վճարելու մասին: Դատարանը նաև նշում է, որ վերջին վճարումը տեղի է ունեցել միայն այն բանից հետո, երբ գանգատը փոխանցվել է Կառավարությանը:

37. Սույն գործում Ռուսաստանի իշխանությունները, տարիներ շարունակ չձեռնարկելով վերջնական դատական որոշման կատարմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները զրկել են ողջ օգտակար ազդեցությունից:

38. Հետևաբար, խախտվել է վերոհիշյալ հոդվածը:

### III. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը

39. Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածն ասում է. «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահ հանրության, և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում իր հիմնական շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ

վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի, կամ մյուս տուրքերի, կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

40. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «հայցապահանջի առարկա» կարող է հանդիսանալ «գույքը», եթե պահանջը բավականաչափ հիմնավորված է, որպեսզի ունենա հայցային ուժ (տես՝ Stran Greek Refineries և Ստրատիս Անդրեադիսը ընդդեմ Հունաստանի 1994թ. դեկտեմբերի 9-ի վճիռը, Series A թ. 301-B, էջ 84, կետ 59):

Շախտիի քաղաքային դատարանի՝ 1997թ. մարտի 3-ի, 1999թ. մայիսի 21-ի և 2000թ. մարտի 9-ի որոշումները ճանաչել են դիմողի հայցապահանջի՝ կատարման ենթակա լինելը և ոչ թե պարզապես պետությունից աջակցություն ստանալու՝ նրա ընդհանուր իրավունքը: Այս վճիռները դարձել են վերջնական, քանի որ դրանց դեմ որևէ բողոք չի ներկայացվել, և հարուցվել են կատարողական վարույթներ: Հետևաբար, դիմողի՝ վճռի կատարմանը հասնելու անհնարինությունն, առնվազն մինչև 2001թ. մարտի 5-ը, խոչընդոտել է վերջինիս՝ իր սեփականությունից անարգել օգտվելու իրավունքին, որն ամրագրված է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի 1-ին նախադասությունում:

41. Շախտիի քաղաքային դատարանի վճիռները չկատարելով՝ պետական իշխանությունները խոչընդոտել են դիմողի կողմից այն գումարն ստանալուն, որը նա ողջամտորեն ակնկալում էր ստանալ:

Կառավարությունը որևէ հիմնավորում չի ներկայացրել այս միջամտության կապակցությամբ, և Դատարանը գտնում է, որ նմանօրինակ անգործությունը չի կարող արդարացվել միջոցների բացակայությամբ:

42. Արդյունքում՝ խախտվել է նաև թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը:

#### IV. Կոնվենցիայի 41 հոդվածի կիրառումը

43. Կոնվենցիայի 41 հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

#### Ա. Վնասը

44. Դատարանը մատնանշում է, որ Դատարանի կանոնակարգի 60-րդ կանոնի՝ արդարացի բավարարման յուրաքանչյուր պահանջ պետք է լինի մանրամասնված ըստ կետերի և ներկայացվի գրավոր՝ համապատասխան հիմնավորող փաստաթղթերի կամ ստացականների հետ համատեղ, «որոնց՝ պակաս կամ թերի լինելու դեպքում Պալատը կարող է մերժել պահանջը՝ ամբողջությամբ կամ մասամբ»:

45. Սույն գործում, 2001թ. հունիսի 26-ին, այն բանից հետո, երբ զանգատը ճանաչվել է մասամբ ընդունելի, դիմողը հրավիրվել է Քարտուղարության կողմից՝ ներկայացնելու արդարացի բավարարման համար իր պահանջները: Նա որևէ նման պահանջ չի ներկայացրել: Սակայն իր զանգատում դիմողը գումարի պահանջ է ներկայացրել ոչ նյութական վնասի համար՝ 300,000 ԱՄՆ դոլարի չափով:

46. Կառավարությունն այս պահանջի կապակցությամբ որևէ առանձնահատուկ դիտողություն չի արել:

47. Դատարանը նկատի է առնում, որ խախտումների արդյունքում դիմողը կրել է որոշ ոչ նյութական վնաս, որը չի կարող հատուցվել միայն Դատարանի կողմից

խախտման ճանաչմամբ: Այնուամենայնիվ, կոնկրետ այն գումարը, որը պահանջվել է, չափազանց մեծ է: Արդարացիորեն վճռելով, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 41-րդ հոդվածով, Դատարանը դիմողին հատկացնում է 3,000 եվրոյի չափով գումար:

Բ. Տոկոսները՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում

48. Համաձայն Դատարանին հայտնի տեղեկությունների, սույն որոշման ընդունման օրվա դրությամբ Ռուսաստանում կիրառվող՝ օրենքով սահմանված տոկոսադրույքը կազմում է տարեկան 23%:

#### ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՉԱՅՆ

1. Վճռում է, որ դիմողը կարող է հավակնել «զոհ» լինելու՝ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի նպատակների համար:

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

4. Վճռում է, որ՝

ա. սույն վճռի՝ համաձայն Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի՝ վերջնական դառնալու օրվանից սկսած եռամսյա ժամկետում պատասխանող պետությունը պետք է վճարի դիմողին, որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, 3000 (երեք հազար) եվրո՝ փոխարկված պատասխանող պետության պետական արժույթի վճարման օրը կիրառվող կուրսով, գումարած ցանկացած հարկ, որը կարող է ենթակա լինել վճարման:

բ. տարեկան 23% տոկոսադրույքով սովորական տոկոս պետք է վճարվի՝ սկսած վերը նշված եռամսյա ժամկետը լրանալու օրվանից՝ մինչև վճարումների կատարումը:

Կատարված է անգլերենով և ծանուցված գրավոր 2002թ. մայիսի 7-ին՝ Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն:

Էրիկ Ֆրիբերգ Քրիստոս Ռոզակիս

Քարտուղարության նախագահ

1. Գումարի չափը նշված է առանց հաշվի առնելու 1998թ. դեկտեմբերին: Համաձայն 1997թ. օգոստոսի 4-ի «Ռուսական տարադրամի նոմինալ արժեքի և տարադրամի ստանդարտների մոդիֆիկացիայի մասին» Նախագահի հրամանագրի, 1998թ. հունվարի 1-ից 1000 հին ռուբլին կդառնա 1 նոր ռուբլի: